ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Մեծամոր համայնքի Նոր Արտագերս բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ

14.08.2025թ. Մեծամոր համայնք,

Նոր Արտագերս բնակավայր

Հանրային լսմանը մասնակցում էին՝

- հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյանը,
- Մեծամոր համայնքի Նոր Արտագերս բնակավայրի վարչական ղեկավար Արման Լաչինյանը,
- Արմավիրի մարզպետարանի և Մեծամորի համայնքապետարանի ներկայացուցիչները,
- Տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ Ռուբեն Վարդանյանը,,
- «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը,
- Շահագրգիռ հանրությունը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված կարգով 2025թ. օգոստոսի 14-ին՝ ժամը 12:00-ին Մեծամոր համայնքի Նոր Արտագերս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում Նոր Արտագերս բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը:

Հանրային լսումները վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Արմինե Վարդանյանը, ով հանդես եկավ բացման խոսքով ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները.

Համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է Բ կատեգորիայի:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններ կարծիքներ ստանալու համար: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության

վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքի և կառավարության Որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է, 1-ին հանրային լսման արդյունքում համայնքի ավագանին տվել է իր նախնական համաձայնությունը:

Համաձայն կառավարության Որոշման շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները՝ առկայության դեպքում պետք է ներկայացվեն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննական կենտրոնին:

Այնուհետև Փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, թե ՇՄԱԳ հաշվետվությամբ ինչ է նախատեսվում իրականացնել, ներկայացրեց կառուցապատման տեխնիկական ցուցանիշները նախագծի հետ համեմատելու և տվյալները ճշգրտելու նպատակով:

Արմինե Վարդանյանն առաջարկեց որպեսզի կազմակերպության ներկայացուցիչները ներկայացնեն կառուցապատման վերաբերյալ տեղեկատվությունը, ինչ լուծումներ են առաջարկվել ջրամատակարարման և ջրահեռացման համար, ինչպես նաև ներկայացնեն շրջակա միջավայրի վրա ազդցությունների մեղմման վերաբերյալ տեղեկատվությունը:

Տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ռուբեն Վարդանյանը ներկայացրեց կառուցապատման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները, որոնք կապված են շինարարության աշխատանքների ընթացքով, քանդման, բեռնման, շին տեխնիկայի աշխատանքի արդյունքում առաջացած արտանետումներով, որոնց համար մեղմող միջոցառումները ներառվել են հաշվետվությունում:

Խոսքը փոխանցվեց «Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի ներկայացուցչին, ով ներկայացրեց կառուցապատման տեխնիկական ցուցանիշները և կառուցապատման լուծումները:

Հանրային լսումներում Վարչական ղեկավարը ողջունեց նախատեսվող գործունեության իրականացումը և շնորհակալությունը հայտնեց իրենց բնակավայրի դպրոցն ընտրելու համար: Այլ առաջարկներ և դիտողություններ չներկայացվեցին:

Հանրային լսումներից առկա են լուսանկարներ, որոնք հանրային լսումների մասնակիցների ցանկի հետ միասին կցված են սույն Արձանագրությանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Արմինե Վարդանյան

«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Էդուարդ Դավթյան

ՀԱՆՐԱՅԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԼՍՈՒՄ

28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343 – Ն Որոշման համաձայն

«Կապիտալ դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Արտագերս բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ

14.08.2025թ. (12.^{00})

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Բնակության հասցե հեռ. համար	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible] 093614289	
2.	[illegible]	[illegible] 093871008	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	
5.	[illegible]	[illegible]	
6.	[illegible]	[illegible] 077352007	
7.	[illegible]	[illegible] 077996409	
8.	[illegible]	[illegible] 098-12-76-77	
9.	[illegible]	[illegible]	
10.	[illegible]	[illegible]	
11.	[illegible]	[illegible]	
12.	[illegible]	[illegible] 094089119	
13.	[illegible]	[illegible]	
14.	[illegible]	[illegible]	
15.	[illegible]	[illegible]	